ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «11» փետրվար 2026թ № 304-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-Ի N 1591-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման հավելվածի 41.1-ին կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով՝

Հրամայում եմ

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2025 թվականի հունիսի 9-ի ««ԳԱՐ-ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Սյունիքի՝ շինարարական նյութերի փորձարկման լաբորատորիա «ՊՐՈՖ ԼԱԲ»-ին Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) և Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին

նշանակելու մասին» N 1591-Ա հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հրամանի առաջին կետում «N 1, N 2 և N 3 հավելվածներով սահմանված հավատարմագրման ոլորտում ընդգրկված արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի ծածկագրերի, ցուցանիշների և համապատասխան տեխնիկական կանոնակարգերով սահմանված փորձարկման (այդ թվում՝ նմուշառման) մեթոդը սահմանող փաստաթղթերի նշագրերի)» բառերը փոխարինել «) N 1, N 2 և N 3 հավելվածներում ամրագրված հավատարմագրման ոլորտի շրջանակներում ընդգրկված արտադրանքի/օբյեկտի անվանման, Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի (ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ) ծածկագրի, արտադրանքի/օբյեկտի նորմատիվ իրավական ակտի և/կամ ստանդարտացման փաստաթղթի նշագրի և/կամ անվանման, ցուցանիշների անվանման, այդ թվում՝ նմուշառման, փորձարկման, այդ թվում՝ նմուշառման, մեթոդը սահմանող փաստաթղթի նշագրի, անվանման, կետի» բառերով.

2) Հրամանի 5-րդ կետում «նկատմամբ կատարման» բառերը փոխարինել «կատարման նկատմամբ» բառերով.

3) Հրամանի հավելվածի «Հայաստանի Հանրապետության (ՀՀ) տեխնիկական կանոնակարգ» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության (ՀՀ) տեխնիկական կանոնակարգեր» բառերով.

4) Հրամանի հավելվածի Հայաստանի Հանրապետության (ՀՀ) տեխնիկական կանոնակարգի ցանկը լրացնել նոր՝ 2-րդ կետով. «2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 22-ի «Բետոնի ամրանավորման համար օգտագործվող պողպատե արտադրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 179-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 607-Ն որոշում:»:

2026-02-25 11:45:49 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՊԱՊՈՅԱՆ

ԳԵՎՈՐԳ